

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր,
փ.գ.դ., պրոֆեսոր

« _____ » 2024 թ.
Պետրոսյան Պ. Ս.



ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

**Լիլիթ Հովհաննեսի Պետրոսյանի «Ex officio» (գործի ի պաշտոնե քննության)
սկզբունքի իրացումը վարչական դատավարությունում» վերաբերությամբ
ԺԲ.00.04 – «Դատական իրավունք՝ դատարանակազմություն, քաղաքացիական
դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական
փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական
գործունեության տեսություն» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման**

Լիլիթ Հովհաննեսի Պետրոսյանի՝ (այսուհետ՝ Հեղինակ) թեկնածուական
ատենախոսությունը նվիրված է ի պաշտոնե քննության (*ex officio քննություն կամ
ինկվիզիցիոն քննություն*) սկզբունքի համակողմանի հետազոտությանը:

Թեև իրավական այս ինստիտուտը գիտական և գործնական հարուստ փորձ
ունի Արևմտյան Եվրոպայի երկրներում (հատկապես Գերմանիայում),
հետխորհրդային երկրների իրավական համակարգերում այն նորություն է և
համարժեք չի ընկալվում, ուստի թեմայի արդիականությունը պայմանավորված է ոչ
միայն ընտրված հիմնահարցերի հրատապությամբ և դրանց գիտական
նշանակությամբ, այլև իրավակիրառ գործընթացի բարելավման
անհրաժեշտությամբ:

Ատենախոսության մեջ առաջադրվել են թեմային առնչվող առավել արդիական գիտական արժեք ներկայացնող տեսական-իրավական դրույթներ, հանգամանորեն քննարկվել են ի պաշտոնե քննության դրսևորման եղանակները:

Հեղինակն ուսումնասիրել է ընտրված հարցերին անմիջականորեն վերաբերող հարուստ մասնագիտական գրականություն, վերլուծել է թեմային առնչվող իրավակիրառական նյութերը, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերն և արտասահմանյան երկրների փորձը, ինչը հնարավորություն է տվել հեղինակին առավելագույնս համալիր անդրադառնալու խնդրո առարկա հարցադրումների առնչությամբ ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան իրավագետների դիրքորոշումներին, առանձնացնելու առավել հիմնավորված, փաստարկված մոտեցումները և դրանց համակողմանի վերլուծության արդյունքներով առաջադրել համարժեք եզրահանգումներ:

Ատենախոսությունն ունի տրամաբանական կառուցվածք, այն հնարավորություն է տվել նախապատվելի համամասնությամբ անդրադառնալու առավել ընդհանուր հարցադրումների քննարկմանը:

Ատենախոսությունում հեղինակը ցուցաբերել է ինքնուրույն հետազոտություն կատարելու, տեսական աղբյուրներից և գործնական նյութերից պատշաճ օգտվելու և ինքնուրույն եզրահանգումներ առաջադրելու կարողություններ:

Միաժամանակ, ատենախոսության առնչությամբ առկա են որոշ նկատառումներ:

Ընդհանուր նկատառում: Վարչական դատավարության սկզբունքին վերաբերող ատենախոսության թեման հաստատվել է «Դատական իրավունք» ԺԲ.00.04 թվանիշով մասնագիտությամբ, որի մեջ ընդգրկվում են՝ դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն: Ամենայն հավանականությամբ հետազոտությունն իրականացվել է ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնում:

Վարչական դատավարության իրավունքին վերաբերող թեմաները ԺԲ.00.04 թվանիշով մասնագիտությամբ հաստատելու և համապատասխան

հետազոտությունը քաղաքացիական դատավարության ամբիոնում իրականացնելու քաղաքականությունը սկզբունքորեն դառնում է անընդունելի ներքոհիշյալ փաստարկների համատեքստում:

Նախ՝ այս պահի դրությամբ ԺԲ.00.04 թվանիշով մասնագիտությունների շարքում վարչական դատավարությունը բացակայում է: Ընդ որում, այդ թվանիշով մասնագիտությունների ցանկը սպառիչ է:

ՀՀ-ում վարչական դատավարությունը, որպես պոզիտիվ իրավունք, երկար տարիներ առանձնացվել է քաղաքացիական դատավարությունից և գործում է որպես դատավարության ինքնուրույն ձև (տեսակ): Վարչական դատավարության գիտությունը նույնպես պետք է էմանսիպացված լիներ քաղաքացիական դատավարության գիտությունից:

Երկրորդ՝ քանի դեռ ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեն ԺԲ.00.02 և ԺԲ.00.04 մասնագիտությունների շրջանակներում չի կոնկրետացրել սահմանադրական դատավարության և վարչական դատավարության տեղը, ուստի դատավարության այս տեսակներին վերաբերող ատենախոսության թեմաները, գտնում ենք, անհրաժեշտ է հաստատել ԺԲ.00.02 – հանրային իրավունք՝ մասնագիտության շրջանակում:

Բանն այն է, որ վարչական իրավունքն ընդգրկված է ԺԲ.00.02 թվանիշով մասնագիտությունների ցանկում, իսկ վարչական իրավունքի գիտությունը (նաև սահմանադրական իրավունքը) բաղկացած է նյութական իրավունքի և վարույթային իրավունքի մասերից: Վարչական վարույթային իրավունքը իր հերթին բաղկացած է յուրիսդիկցիոն և ոչ յուրիսդիկցիոն վարույթներից: Որևէ տրամաբանություն չկա վարչական «մինչդատական» վարույթը և վարչական դատական վարույթը հետազոտել տարբեր թվանիշով մասնագիտությունների շրջանակներում:

Երրորդ՝ վերը նշված հանգամանքն *անուղղակի* հաստատված է նաև ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից: Այսպես՝ Կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրված ԺԲ.00.02 – մասնագիտությունների քննական ծրագրի «վարչական իրավունք» բաժնում ներառված են հետևյալ թեմաները՝ Վարչական դատավարության և վարչական արդարադատության ինստիտուտների

հարաբերակցությունը: Վարչական դատավարության սկզբունքները: Վարչական դատավարության մասնակիցների կարգավիճակը¹ և այլն:

Մինչդեռ ժԲ.00.04 մասնագիտության շրջանակներում վարչական դատավարությանը վերաբերող թեմաներ նախատեսված չեն (բացառություն է «փաստաբանի մասնակցությունը վարչական դատավարությանը» թեման)²:

Այսպիսով, վերը նշվածը բավարար է պնդելու, որ վարչական դատավարության ոլորտի ատենախոսությունների թեմաները (մինչև հարցի պետական կարգավորումը) հաստատվեն ժԲ.00.02 – մասնագիտության շրջանակում:

Այս նկատառման հասցեատերը թեման հաստատած հիմնարկն է, ուստի այն բարեխիղճ հայցորդի համար չի կարող որևէ բացասական հետևանք առաջացնել:

Բովանդակային նկատառումներ:

1. Հետազոտության արդյունքում ներկայացված պաշտպանության դրույթներից, թերևս, ամենից խնդրահարույցը ի պաշտոնե քննության հատկանիշներին վերաբերող դրույթներն են: Հեղինակն իրավական այս ինստիտուտը բնութագրել է որպես մասնավոր իրավունքի սուբյեկտների նկատմամբ հանրային իշխանության մարմինների ունեցած «փաստացի առավելությունները» վերացնելու գործիք և, ըստ այդմ, տվել է նշված սկզբունքի բնորոշումը (այդ թվում՝ այն օրենսդրորեն ամրագրելու առաջարկ):

Նախ՝ ի պաշտոնե քննության սկզբունքը երկար տարիներ հեղինակավոր գիտնականների կողմից ընկալվել և շարունակվում է ընկալվել որպես հանրային շահի պաշտպանության մեխանիզմ, որպիսի թեզը հերքելու համար անհրաժեշտ են գիտագործնական լուրջ փաստարկներ:

Երկրորդ՝ հանրային իշխանության մարմինները դատարանում հավասար են մասնավոր սուբյեկտների հետ, առաջինները չունեն դատավարական առավելություններ երկրորդների նկատմամբ, հանրային իրավունքի դատավարությունները, ինչպես մասնավոր, նույնպես մրցակցային են: Այս կանոնից ցանկացած շեղում բերում է դատավարության ոչ մրցակցային, ըստ այդմ՝ անարդար

¹ <https://bok.am/sites/default/files/2020-04/%D4%BA%D4%B2.00.02.pdf>

² <https://bok.am/sites/default/files/2020-04/%D4%BA%D4%B2.00.04.pdf>

լինելուն: Վարչական դատավարությունում ևս մասնակիցները՝ անկախ իրենց կարգավիճակից (մասնավոր իրավունքի սուբյեկտ, թե հանրային իշխանության մարմին), հավասար են:

Չափազանց վիճելի են նաև հանրային իշխանության մարմինների «փաստացի առավելությունների» վերաբերյալ փաստարկները: Հաճախ դատավարության մասնավոր կողմը շատ ավելի պատրաստված է լինում, քան հանրայինը (ավելի կոմպետենտ ներկայացուցիչներ, անձնական շահագրգռվածություն և այլն): Իսկ այն, որ հանրային իշխանության մարմինները երբեմն տիրապետում են ավելի շատ տեղեկատվության, քան մասնավոր իրավունքի սուբյեկտները, միևնույնն է, չի ստեղծում «փաստացի առավելություն», քանի որ դատավարությունում դրանք կարող են օգտագործվել միայն մրցակցային պայմանների պահպանմամբ (կողմն իրավունք ունի ծանոթանալու ցանկացած տեղեկատվության, որը քննության առարկա է դատարանում, իր կարծիքը հայտնել դրա վերաբերյալ, առարկել դրանից բխող եզրակացությունների դեմ և այլն):

Երրորդ՝ դատարանի կողմից դատավարության մասնակիցներին տեխնիկական օգնություն ցուցաբերելու ընթացակարգը ոչ թե ուղղված է հանրային իշխանության մարմինների «փաստացի առավելությունները» վերացնելուն, այլև ձևական պահանջների չարաշահման արգելքի սկզբունքը իրացնելուն (թեպետ մեր օրենսդրությունում այս սկզբունքը ամրագրված է միայն վարչական մարմինների համար, սակայն հանրային իրավունքի դոկտորինն այն տարածում է հանրային իշխանության բոլոր մարմինների վրա): Երբ դատարանը դատավարության մասնակիցների ուշադրությունը հրավիրում է նրանց թույլ տված ձևական սխալների վրա և «խորհրդատվություն է» տալիս դրանց վերացման վերաբերյալ, նա չպետք է դա կատարի ընտրողաբար՝ կախված, թե դատավարության մասնակիցը մասնավոր իրավունքի, թե հանրային իշխանության սուբյեկտ է: Այս ինստիտուտի իմաստն է՝ ձերբազատել դատավարությունը ձևական խնդիրներից, որպեսզի դրանք չխոչընդոտեն արդարադատության իրականացմանը: Մինչդեռ հեղինակը, հետևելով մեր օրենսդրի չհիմնավորված մոտեցմանը (Վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդված), դատարանի մատնանշման պարտականությունը բխեցրել

է ի պաշտոնէ քննության սկզբունքից՝ հաշվի չառնելով և չհերքելով վերը նշված փաստարկները:

Արդյունքում՝ խոցելի է սկզբունքի՝ Հեղինակի կողմից տրված բնորոշումը, քանի որ ի պաշտոնէ քննությունը ի սկզբանէ դիտարկվել է առավելապես որպէս մրցակցության ապահովման գործիք: Դրա հետևանքով հեղինակի մյուս դատողությունները (թեև դատողություններից շատերի հիմքում դրված են հիմնավորված փաստարկներ), կարծես, շեղվել են հանրային շահի պաշտպանության առանցքային նպատակից:

2. Ատենախոսությունում առաջադրված եզրահանգումները, ինչ խոսք, ունեն գործնական ուղղվածություն, դրանք նաև ուղեկցվել են տեսական հիմնավորումներով, սակայն աշխատանքն էլ ավելի շահեկան կլիներ, եթե այդ պաշտպանության դրույթներում արտացոլված եզրահանգումները ոչ միայն անմիջականորեն վերաբերեին օրենսդրական փոփոխություններին, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումները որպէս օրենսդրական փոփոխություններ առաջարկելուն, կամ բխեին ՀՀ ՎԴՕ ամրագրված համապատասխան դրույթների զուտ բովանդակային վերլուծությունից, այլև որոշակի ընդհանրացումների արդյունքում միտված լինեին գիտական օրինաչափությունների բացահայտմանը, այլ կերպ ասած՝ ընդգծվեր այդ առաջարկությունների բուն գիտական արժեքը, դրա կիրառման առնչությամբ ներկայացվեին առավել համակարգային տեսական դիրքորոշումներ ինչը խնդրի լուծումը նկատելիորեն կդարձներ ամբողջական:

Այս համատեքստում, ատենախոսության պաշտպանության որոշ դրույթներ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներին համապատասխան օրենսդրական կարգավորումների փոփոխությունների կամ դրանք վերանայելու առաջարկություններ են: Այսպես, 5-րդ կետում առաջարկված պաշտպանության դրույթը բովանդակային տեսանկյունից համապատասխանում է օրինակ՝ թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշմամբ արտահայտված մատնանշման պարտականության կատարման սպառված համարվելու դիրքորոշմանը: Այսպես, «Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հայցատեսակի ընտրության սուբյեկտիվ իրավունքը բոլոր

դեպքերում պատկանում է հայցվորին, և եթե ոչ հստակ կամ ոչ ճիշտ հայցատեսակը հստակեցնելու կամ ճիշտ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատարանի մատնանշումից հետո էլ հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել հայցվորի կողմից ներկայացված հայցապահանջի շրջանակներում: Այդ պարագայում դատարանի մատնանշման պարտականությունը համարվում է կատարված:

Իսկ Հեղինակը նշում է՝ «աշխատանքում առաջարկվել է սահմանել, որ Վարչական դատարանի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից թույլ տրված սխալները մատնանշելու և դրանք շտկել առաջարկելու պարտականությունն իրացնելու պարագայում, տնօրինչականության սկզբունքից ելնելով, անձի իրավունքն է շտկել նման սխալները և որոշել ներկայացված հայցի ճակատագիրը, իսկ մատնանշված սխալները չուղղելու դեպքում «ex officio» սկզբունքը համարվում է իրացված:»:

Նույն դիտարկումը վերաբերում է 6-րդ կետում ներկայացված պաշտպանության դրույթին, այն համատեքստում, որ ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԴ/3804/05/15 վարչական գործով 14.03.2017թ. որոշմամբ արձանագրվում է. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու վարչական դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու սկզբունքի էությունից բխող պարտականությունը վարչական դատավարությունում **կարող է իրականացվել թե՛ գործի հարուցման, թե՛ գործը դատաքննության նախապատրաստելու, թե՛ դատաքննության փուլերի ընթացքում:** Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վարչական դատավարության վերոգրյալ փուլերի ընթացքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողությունների կատարման անհրաժեշտության և բավարար հիմքերի առկայության պարագայում վարչական դատարանը պարտավոր է ձեռնամուխ լինել այդ գործողությունների կատարմանը: Այլ կերպ ասած, եթե գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio")

պարզելու սկզբունքի բովանդակությունը կազմող այս կամ այն դատավարական գործողությունը գործի քննության սկզբնական (գործի հարուցման կամ հայցադիմումի ընդունելիության) փուլում կատարելու համար առկա են բավարար իրավական և փաստական հիմքեր, ապա վարչական դատարանը պարտավոր է տվյալ դատավարական պարտականությունը կատարել հենց այդ փուլում՝ ելնելով գործի հետագա քննության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից:»

Այսպես, ինչպես նշում է Հեղինակը «...Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՎԴՕ 5-րդ հոդվածով բացահայտված չեն հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ոչ հստակ հայցային պահանջները ճշտել առաջարկելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու գործողությունների իրականացման կարգը, ինչի արդյունքում պարզ չէ, թե դատավարության որ փուլում է իրականացվում այս կամ այն գործողությունը՝ աշխատանքում ըստ կոնկրետ գործողության բնույթի և նշանակության առաջարկվել է այդ գործողություններն իրականացնել կամ հայցադիմումի ընդունելության փուլում և/կամ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում: Ամեն դեպքում, գտնում ենք, որ եթե «ex officio» սկզբունքի բովանդակությունը կազմող այս կամ այն դատավարական գործողությունը գործի քննության սկզբնական (գործի հարուցման կամ հայցադիմումի ընդունելիության) փուլում կատարելու համար առկա են բավարար իրավական և փաստական հիմքեր, ապա վարչական դատարանը պարտավոր է տվյալ դատավարական պարտականությունը կատարել հենց այդ փուլում՝ ելնելով գործի հետագա քննության արդյունավետությունն ապահովելու նկատառումներից:»:

Հեղինակի կողմից ատենախոսության հիմնադրույթները համարժեք արտացոլված են ՀՀ ԲՈԿ-ի կողմից սահմանված գիտական հանդեսներում տպագրված թվով 7 գիտական հոդվածներում և ատենախոսության սեղմագրում:

Աշխատանքը, հիմնականում, գրված է գրական պատշաճ լեզվաոճով, այն գրեթե զերծ է թերի, բազմիմաստ ու խրթին մտքերից, լեզվական ու քերականական կանոնների շեղումներից, սակավաթիվ են նաև վրիպակները:

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ նկատառումներ՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Լիլիթ Հովհաննեսի Պետրոսյանի՝ «Ex officio» (գործի ի պաշտոնե քննության) սկզբունքի իրացումը վարչական դատավարությունում՝ վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով՝ թեկնածուական ատենախոսությունը ներկայացվող պահանջներին, վերոհիշյալ նկատառումները նկատելիորեն չեն նսեմացնում հետազոտության արժեքը, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 10.06.2021թ-ի նիստում (հեռավար եղանակով), որին մասնակցել են ամբիոնի վարիչ ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Ղամբարյանը, ի.գ.թ., դոցենտ Թ.Շաքարյանը, ի.գ.թ. դոցենտ Ռ. Խանդանյանը, ի.գ.թ. Կ.Զարիկյանը, ի.գ.թ. դոցենտ Ա. Փխրիկյանը, ի.գ.թ. Ս. Թորոսյանը, ի.գ.թ. դոցենտ Լ. Հակոբյանը, ի.գ.թ. Ա. Գևորգյանը, իրավունքի դոկտոր Գ. Հովհաննիսյանը:

Իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի վարիչ,
իրավագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Արթուր Ղամբարյան

Մասնագետի (Արթուր Ղամբարյան) ստորագրության իսկությունը

հաստատում եմ.

Հայ-ռուսական համալսարանի գիտ. քարտուղար

Ռ.Ս. Կասաբաբովա



(ստորագրություն և կնիք)